



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

2024Թ. ԱՊՐԻԼԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.




2024Թ.-Ի ԱՊՐԻԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- **Համաշխարհային տնտեսություն.** ապրիլին ՀՀ գործընկեր երկրներում տնտեսական ակտիվության աճ է գրանցվել. ԱՄՆ-ում և ՌԴ-ում աճի տեմպերը նախորդ ամիսների համեմատ դանդաղել են, իսկ ԵԳ-ում և Չինաստանում շարունակել են արագանալ: ՌԴ-ի և Չինաստանի տնտեսական ակտիվության աճի հիմնական գործոնը եղել է մշակող արդյունաբերության ոլորտը, իսկ Եվրագոտում՝ ծառայությունների ոլորտը: Մետաղների և պարենային ապրանքների միջազգային գները մարտի համեմատ աճել են:
- **Տնտեսության արտաքին հատված.** ապրիլին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Նախորդ տարվա ապրիլի նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.8%-ով, իսկ Եվրոյի նկատմամբ արժևորվել է 1.3%-ով: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 13.8%: Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-ապրիլ ամիսներին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվաքանակի նվազում է արձանագրվել 3.8%-ով: Ապրիլին արձանագրվել է 8.7% նվազում, որին ՌԴ-ի և այլ երկրների նպաստումները եղել են գրեթե հավասար (մարտին թվաքանակը եղել է անփոփոխ):
- **Տնտեսության իրական հատված.** տնտեսական ակտիվության աճի տեմպը ապրիլին կազմել է 10.4%՝ փետրվարի նկատմամբ դանդաղելով 4.9 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության, ծառայությունների, ինչպես նաև առևտրի աճերի դանդաղմամբ: 12 ամսյա գնաճը կազմել է -0.7%, իսկ բնականոն գնաճը կազմել է -0.5%:
- **Տնտեսության ֆինանսական հատված.** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ 19.3% վարկերի ծավալների աճով, որն ուղեկցվել է միջինում կայուն տոկոսադրույքներով: Իսկ պետական պարտատոմսերի տոկոսադրույքները, հատկապես կարճաժամկետ հատվածում զգալի նվազել են դրամավարկային պայմանների մեղմացման ազդեցությամբ:
- **Տնտեսության հարկաբյուջեի հատված.** հարկային եկամուտների աճի տեմպը կազմել է 6.6%, իսկ պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը՝ 40.0%: Ապրիլի 47.2 մլրդ դրամ հավելուրդի պայմաններում հունվար-ապրիլ ամիսներին բյուջեի հավելուրդը կազմել է 46.3 մլրդ դրամ:

1. Միջազգային զարգացումներ: Ապրիլին համաշխարհային տնտեսական ակտիվության աճը առավելապես պայմանավորված է եղել ծառայությունների ոլորտի ավելի արագ աճով, իսկ մշակող արդյունաբերության աճի տեմպը դանդաղել է: Ապրիլին ԱՄՆ-ում գրանցվել է տնտեսական ակտիվության տեմպի դանդաղում՝ պայմանավորված ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտների ավելի դանդաղ աճերով: Եվրագոտում տնտեսական վերականգնման հիմնական շարժիչ ուժը շարունակել է մնալ ծառայությունների ոլորտը. ապրիլին գրանցված աճը պայմանավորված է եղել աճող պահանջարկով: Մշակող արդյունաբերության ոլորտում պահպանվել է անկման միտումը: Ապրիլին ՌԴ տնտեսական ակտիվության դանդաղում է դիտվել, մասնավորապես, ծառայությունների ոլորտում: Մշակող արդյունաբերության ոլորտը շարունակում է ընդլայնվել՝ պայմանավորված ներքին պահանջարկի աճով: Ապրիլին Չինաստանում գրանցված աճի արագացումը պայմանավորված է եղել մշակող արդյունաբերության արտադրանքի աճով: Սակայն զբաղվածների թիվը շարունակաբար նվազել է:


Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միպոմները



Ապրիլին ԱՄՆ-ում գնաճը թուլացել է՝ կազմելով 3.4% (մարտ՝ 3.5%)՝ պայմանավորված վարձակալության և բենզինի գների շարունակական աճին ծառայությունների ծախսերի մեղմացմամբ: Եվրագոտում գնաճը պահպանվել է մարտ ամսվա նույն մակարդակում՝ 2.4%, իսկ ՌԴ-ում գրանցվել է 7.8% գնաճ (մարտին՝ 7.7%), որի հիմնական պայմանավորող գործոններն են եղել պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճը: Չինաստանում, մինչև հունվար տևած գնանկումից հետո ներքին պահանջարկի շարունակական վերականգնման պայմաններում երրորդ ամիսն անընդմեջ գրանցվել է գնաճ՝ ապրիլին կազմելով 0.3%: ՌԴ-ում գնաճը կազմել է 7.8%. Գնաճային ճնշումները պայմանավորված են պարենային և ոչ պարենային ապրանքների գնաճով:

Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն՝ ապրիլին չփոփոխելով սահմանված տոկոսադրույքները: Հաշվի առնելով այն փաստը, որ գնաճի թուլացումը դանդաղ կընթանա՝ ԱՄՆ ԴԴՀ քաղաքականության տոկոսադրույքը պահպանվել է 5.25 - 5.5% մակարդակում, ԵԿԲ տոկոսադրույքը՝ 4.5%, ՌԴ ԿԲ հիմնական տոկոսադրույքը՝ 16% մակարդակում՝ նշելով, որ քաղաքականության զսպող ուղղությունն անհրաժեշտ կլինի պահպանել ավելի երկար՝ պայմանավորված ներքին պահանջարկի աճով, որը գերազանցում է ապրանքներ և ծառայություններ արտադրելու կարողությունը: Հիմնվելով գնաճի կանխատեսումների և ընթացիկ զարգացումների (2023 թվականի սեպտեմբերից ի վեր գնաճը նվազել է ավելի քան 2.5 տոկոսային կետով) վրա՝ սպասումներին համահունչ՝ հունիսին ԵԿԲ - ն տոկոսադրույքն իջեցրել է 0.25 տոկոսային կետով:

Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարկային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում



Մետաղների և պարենային ապրանքների շուկաներում ապրիլին գրանցվել է գնաճ. նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 5.4%-ով, պղնձի գինը՝ 8.9%-ով, իսկ պարենային ապրանքների գները՝ 0.7%-ով: Նավթի միջազգային գնի աճը պայմանավորող գործոնները շարունակել են մնալ OPEC+-ի




կողմից հայտարարված մինչև տարվա կես նավթի արտադրության լրացուցիչ կրճատումները (օրական 2.2 մլն բարել), համաշխարհային տնտեսության վերականգնման դրական ազդակները և հակամարտություններով պայմանավորված արժեզրեզմաների խաթարումները: Սակայն ապրիլի երկրորդ կեսից դիտվող նվազման և կայունացման միտումը պայմանավորված է եղել Իրանի և Իսրայելի միջև առկա լարվածության թուլացմամբ, ԱՄՆ ԴՊՀ-ի կողմից տոկոսադրույքի նվազեցման հետաձգման, ինչպես նաև Մերձավոր Արևելքում հնարավոր հրադադարի սպասումներով:

Պղնձի միջազգային գինը ապրիլին նախորդ ամսվա համեմատ աճել է 8.9%-ով՝ կազմելով 9,464 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ նախորդ տարվա նկատմամբ աճը կազմել է 7.4%: Պղնձի գնի աճի ուղղությամբ զարգացումները պայմանավորված են եղել մշակող արդյունաբերության աճով, հատկապես, պղնձի առաջատար սպառող համարվող Չինաստանում:


Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ աճել է 0.7%-ով՝ պայմանավորված մսի, հացահատիկի, բուսական յուղերի գների աճով. աճի դանդաղումը պայմանավորված է եղել շաքարավազի միջազգային գնի կտրուկ անկմամբ:

Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ



2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. ապրիլին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Ապրիլին արտահանումն աճել է 2.9 անգամ (նախորդ ամսվա աճը՝ 3 անգամ), որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: Ներմուծումն աճել է 2.6 անգամ (նախորդ ամսվա աճը՝ 91.6%):


Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միջուկները, մլն դոլար



Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո ընթացիկ տարվա հունվար-ապրիլ ամիսներին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում 3.8%-ով նախորդ ժամանակահատվածի նույն եռամսյակի նկատմամբ: 2024թ.


ապրիլին ՀՀ այցելած զբոսաշրջիկների թիվը նվազել է 8.7%-ով (մարտին մնացել էր անփոփոխ):

Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը




Շարունակվել է դրամական փոխանցումների նախորդ տարվա նվազման միտումները: 2024թ. ապրիլին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա ապրիլի համեմատ նվազել են շուրջ 34.2%-ով՝ պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 61.2% նվազմամբ:

Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը



ՀՀ դրամը ապրիլին ռուբլու և եվրոյի նկատմամբ արժևորվել է, իսկ դոլարի նկատմամբ պահպանել է արժեզրկման միտումը: Մասնավորապես՝ ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ դրամը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժեզրկվել է 0.8%-ով: Եվրոյի նկատմամբ դրամը արժեզրկվել է 1.3, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ 13.8%-ով:


Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ



3. ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև 2024թ. ապրիլին և կազմել 10.4%՝ մարտի նկատմամբ դանդաղելով 4.9 տոկոսային կետով՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության, ծառայությունների, ինչպես նաև առևտրի ոլորտի աճերի դանդաղմամբ, մինչդեռ շինարարության ոլորտում նկատվել է աճի տեմպերի արագացում: Արդյունքում՝ հունվար-ապրիլին տնտեսական ակտիվության աճը կազմել է 13.2%: Թեպետ արդյունաբերության աճի տեմպի՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճը կազմել է 13.2%: Թեպետ արագացման միտումները շարունակվել են նաև 2024թ. հունվար-ապրիլ ամիսներին՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի բարձր տեմպերով, այնուամենայնիվ ապրիլին նկատվել է արդյունաբերության աճի տեմպի 17.2 տոկոսային կետով դանդաղում:




Գծապատկեր 3.1. ՀՆԱ-ի իրական աճ (%) և նպաստումներ (տ.կ.)




Վերջին ամիսների զարգացումների արդյունքում, ոսկերչության առաջանցիկ աճերով պայմանավորված՝ հունվար-մարտին ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը եղել է արդյունաբերությունը, որին հաջորդել են առևտրի (մեծածախ առևտուր) և ծառայությունների (ֆինանսական և ապահովագրական գործունեություն) ոլորտները: Արդյունաբերության ոլորտի վրա շարունակում է բացասաբար ազդել հանքագործական արդյունաբերության անկումը՝ 4.6 տոկոս (նպաստումը՝ -1.0 տոկոսային կետ): Ծինարարության ոլորտը նույնպես շարունակել է նպաստել տնտեսական ակտիվությանը: Ընդ որում՝ շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների հունվար-մարտին պայմանավորվել է հիմնականում բնակչության և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճերով:

Գծապատկեր 3.2. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)




Գծապատկեր 3.3. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)



Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում ապրիլին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 6.8%-ով՝ կազմելով 273,243 դրամ (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 14.2%-ով՝ կազմելով 214,362 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 4.5%-ով՝ կազմելով 296,629 դրամ): Իրական աշխատավարձը 0.7% գնանկման պայմաններում աճել է 7.6%-ով:

Մարտին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 3.0%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել է շուրջ 5.1%-ով, կազմելով 746,481 մարդ, պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության, շինարարության ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ու ֆինանսական և ապահովագրական գործունեության ոլորտներում աշխատողների թվի աճով:


Գծապատկեր 3.4. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)



ՀՀ անշարժ գույքի շուկայում ապրիլ ամսին գները շարունակել են աճել, չնայած աճի տեմպը մարտի նկատմամբ դանդաղել է: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը մարտի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -1.1-ից 1.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա ապրիլ ամսվա նկատմամբ՝ 3.6-ից 29.5% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 905,500 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ² մակերեսի համար՝ 227,000 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը մարտի համեմատ տատանվել է -1.6-ից 1.5% շրջանակներում, իսկ նախորդ տարվա ապրիլ ամսվա նկատմամբ՝ -0.9-ից 27.0%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 444,300 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ² մակերեսի համար՝ 26,500 դրամ):


4. Դրամավարկային քաղաքականություն: Ապրիլին ՀՀ սպառողական շուկայում գնանկումային միջավայրը պահպանվել է: 12 ամսյա գնաճը կազմել է -0.7%, իսկ բնականոն գնաճը՝ -0.5%: Ապրիլի 30-ին ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով այն 8.25%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը (ամսական միջին)



12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի էական բացասական (-1.9 տոկոսային կետ) նպաստմամբ, որին որոշակիորեն հակակշռել են ծառայությունների, ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների դրական նպաստումները՝ համապատասխանաբար՝ 0.9 և 0.3 տոկոսային կետերով: Ոչ պարենային ապրանքները ունեցել են փոքր բացասական նպաստում՝ 0.1 տոկոսային կետ:


Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ






5. Ֆինանսական միջնորդություն: Ապրիլին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով: Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա նույն ամսվա, վարկերի ծավալների աճը (19.3%) գերազանցել է ավանդների ծավալների աճին (10.7%): Ընդ որում, ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 19.9%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 10.5%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. ամենաբարձր նպաստումը շարունակել են ապահովել սպառողական (նպաստումը՝ 5.8 տոկոսային կետ, աճը՝ 24.6%), հիփոթեքային (նպաստումը՝ 5.4 տոկոսային կետ, աճը՝ 23.3%) վարկերը, սակայն տնտեսության ոլորտների (բացառությամբ արդյունաբերության) վարկավորումը ևս աճում է հիմնականում բարձր տեմպերով: Առաջանցիկ վարկավորման արդյունքում ավանդների և վարկերի ծավալների դրական տարբերությունը ապրիլ ամսին որոշակի նվազել է՝ կազմելով 420 մլրդ դրամ (2022թ.-ի վերջին այդ տարբերություն կազմել էր 913 մլրդ դրամ, 2023թ.-ի վերջին՝ 527 մլրդ դրամ): Ոչ ռեզիդենտների ավանդներն աճել են շուրջ 148 մլրդ դրամով (11.3% աճ) նախորդ տարվա նույն ամսվա, և 24.7 մլրդ դրամով՝ մարտի նկատմամբ: Ոչ ռեզիդենտների ավանդները շարունակում են պահպանվել պատմականորեն բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր շուրջ 589 մլրդ դրամով):

Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %



ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները ապրիլին նվազել են, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են: Ապրիլին, հիմնականում պայմանավորված դրամավարկային պայմանների մեղմացման ազդեցություններով, պարտատոմսերի տոկոսադրույքները նվազել են: Ընդ որում, նվազումն ավելի զգալի է եղել եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում: Վարկերի և ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջանակներում, կայունացել են նաև հիփոթեքային և սպառողական վարկերի տոկոսադրույքները:


Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %



6. Հարկաբյուջետային հատված¹: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը ապրիլին պահպանվել է չափավոր մակարդակում: 2024թ.-ի ապրիլին հարկային եկամուտները կազմել են 328.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա ապրիլի նկատմամբ աճելով 6.6%-ով: 2024-ի հունվար-ապրիլ ամիսներին


հարկային եկամուտները կազմել են 828.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 6.1 %-ով:

Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %



Ապրիլ ամսվա հարկային եկամուտների աճի աղբյուրները եղել են բնապահպանական և բնօգտագործման վճարը և եկամտային հարկը՝ համապատասխանաբար 6.4 և 2.9%-ային կետ նպաստումներով: Բացասական նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը (2.1%-ային կետ) և շահութահարկը (1.5%-ային կետ):


Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ



Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների աճի նկատմամբ: Ապրիլ ամսին պետական բյուջեի եկամուտները կազմել են 338.5 մլրդ դրամ (աճը՝ 6.7%), իսկ ծախսերը՝ 291.3 մլրդ դրամ (աճը՝ 40.0%): Ծախսերը ընդգրկել են 270.9 մլրդ դրամի ընթացիկ (որում տոկոսավճարները կազմել են 95.8 մլրդ դրամ) և 20.4 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 20.9 մլրդ դրամ: Ընթացիկ ծախսերը նախորդ տարվա ապրիլի համեմատ աճել են 69.1%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը նվազել են 56.4 %-ով:

2024-ի հունվար-ապրիլ ամիսներին պետական բյուջեի եկամուտները կազմել են 863.4 մլրդ դրամ (աճը՝ 6.2%), իսկ ծախսերը՝ 817.1 մլրդ դրամ (աճը՝ 27.2%):

Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը



Պետական բյուջեն հունվար-ապրիլ ամիսներին ձևավորվել է հավելուրդով, թեպետ ավելի փոքր մակարդակի, քան նախորդ տարվա նույն ժամանակահատվածում: Ապրիլին եկամուտները ծախսերին գերազանցել են 47.2 մլրդ դրամով, իսկ հունվար-ապրիլ ամիսների հավելուրդը կազմել է 46.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 170.2 մլրդ դրամ հավելուրդի համեմատությամբ:

¹ Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար: